ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2025 թվականի մայիսի 27-ին կայացած գիտական Խորհրդի N 17 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քելյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 27-ը (ցուցակը կցվում է)

Նիստի մեկնարկից առաջ հայտարարվեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

1. **Հայցորդների ատեստավորում** /զեկ. ամբ. վարիչներ/

2. **2024/2025 ուստարվա մասնագիտական և մանկավարժական պրակտիկաների արդյունքների քննարկում** /զեկ. ամբ. վարիչներ/

3. **2024/2025 ուստարվա ուսումնական պրակտիկաների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում** /զեկ. գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

4. **«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների քննարկում** /զեկ. գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

5. **2024/2025 ուստարվա ընթացիկ և եզրափակիչ քննությունների ընթացքը ֆակուլտետում** /զեկ. գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

6. **«Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության», «Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման», «Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնների վարիչների հաշվետվությունը (2023/2024) ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ** /զեկ. ամբ. վարիչներ/
7. **Ընթացիկ հարցեր**

Օրակարգը հաստատելուց հետո

1.1. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոյանի** հաղորդումը GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի 1-ին տարվա առկա ուսուցման ասպիրանտ **Էրիկ Մանվելի Հովսեփյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ: Ա.Փիլոյանը ներկայացրեց Էր.Հովսեփյանի կողմից իրականացված աշխատանքը, ուսումնառության ընթացքում պարտադիր և կամընտրական առարկաներից կուտակած կրեդիտները, ինչպես նաև աշխատանքային ծրագրերի մասնակցությունն ու հրատարակված գիտական աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարված աշխատանքները, աշխատանքային ծրագրերի մասնակցությունն ու տպագրված գիտական հոդվածները, ինչպես նաև ասպիրանտուրայում ուսուցման կարգի պահանջներին համապատասխան ներկայացված հաշվետվությունը՝ բաց քվեարկության արդյունքներով **ԿՈՂՄ՝ 27 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0,** GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի 1-ին տարվա առկա ուսուցման ասպիրանտ **Էրիկ Մանվելի Հովսեփյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

1.2. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոյանի** հաղորդումը GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Մարիամ Փենինյանի ատեստավորման հարցի վերաբերյալ: Ա.Փիլոյանը ներկայացրեց Մ.Փենինյանի կողմից իրականացված աշխատանքը, ուսումնառության ընթացքում պարտադիր և կամընտրական առարկաներից կուտակած կրեդիտները, ինչպես նաև միջազգային կոնֆերանսների մասնակցությունն ու տպագրված գիտական աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները, միջազգային կոնֆերանսների մասնակցությունն ու տպագրված գիտական հոդվածները, ինչպես նաև ասպիրանտուրայում ուսուցման կարգի պահանջներին համապատասխան ներկայացված հաշվետվությունը՝ բաց քվեարկության արդյունքներով **ԿՈՂՄ՝ 27 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0,** GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ **Մարիամ Հակոբի Փենինյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

1.3. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 1-ին տարվա առկա ուսուցման ասպիրանտ **Մարի Վարուժանի Չաքրյանի** ատեստավորման հարցը: Ներկայացվեց Մ.Չաքրյանի կողմից իրականացված աշխատանքը, ուսումնառության ընթացքում պարտադիր և կամընտրական առարկաներից կուտակած կրեդիտները, ինչպես նաև տպագրված գիտական աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները, տպագրված գիտական հոդվածները, ինչպես նաև ասպիրանտուրայում ուսուցման կարգի պահանջներին համապատասխան ներկայացված հաշվետվությունը՝ բաց քվեարկության արդյունքներով **ԿՈՂՄ՝ 27 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0,** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 1-ին տարվա առկա ուսուցման ասպիրանտ **Մարի Վարուժանի Չաքրյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

2. ԼՍԵՑԻՆ. Երկրաֆիզիկայի, ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի, Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի, Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար դոց.Վ.Մ.Մանուկյանի, Քարտեզագրության և

գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի և Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի դոցենտ Ա.Հ.Պոտոսյանի հաղորդումը **2024/2025 ուստարվա մասնագիտական և մանկավարժական պրակտիկաների արդյունքների վերաբերյալ:** Ամբիոնի վարիչները մանրամասնությամբ ներկայացրին պրակտիկային մասնակցած ուսանողների թիվն ըստ մասնագիտությունների, անցկացման ժամանակահատվածը, ձևաչափը, ընդունող կազմակերպությունները, պրակտիկայի անցկացման ընթացքն ու ձեռք բերած արդյունքները: Երկրաֆիզիկայի, ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանը, պրակտիկայի արդյունավետությունից ելնելով, առաջարկեց վերանայել անցկացման ժամանակահատվածը: Հաղորդման ընթացքում դոց.Ս.Ռ.Սուվարյանը նշեց, որ «արտադրական» պրակտիկայի վերանվանումը «մասնագիտական» պրակտիկայի ենթադրում էր նաև բովանդակային փոփոխություն, ինչը, սակայն, չի նկատվում: Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանը նշեց, որ որոշ ընդունող կազմակերպություններ անցկացրել են վճարովի պրակտիկա (ուսանողները վճարվել են) և նախքան պրակտիտայի անցկացումը կազմակերպել անվտանգության դասընթացներ: Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի դոցենտ Ա.Հ.Պոտոսյանը դրական գնահատեց ավարտական աշխատանքների թեմատիկայի և պրակտիկայի անցկացման կազմակերպությունների համապատասխանեցումը, ինչը դրական է անդրադարձել ավարտական աշխատանքների պաշտպանության որակի վրա:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանը** խոսեց մասնագիտական պրակտիկայի բովանդակային ու եռակողմ (ընդունող կողմ, ուսանող, պրակտիկայի ղեկավար) լինելու մասին՝ թե՛ ուսնողը, թե՛ ընդունող կողմը և թե՛ ղեկավարը, երեքն էլ պետք է տեղեկացված լինեն պրակտիկայի անցկացման ընթացակարգին, պահանջներին և վերջնարդյունքին:

Գ.Ալեքսանյանն իր խոսքում առանձնացրեց պրակտիկաների ընթացքում ունեցած ձեռքբերումների, ինչպես նաև ամբիոնի վարիչի ու կրթական ծրագրերի ղեկավարների մեծ դերի մասին. պետք է հետևեն բովանդակային և կազմակերպչական տեսակետից արդյունավետության բարձրացմանը: **Դեկան Ս.Ս.Քելյանը** հուրախությամբ արձանագրեց նկատելի դրական միտումը՝ թե կազմակերպչական և թե՛ բովանդակային առումով, միևնույն ժամանակ խոսեց նաև տեխնիկական խնդիրների առկայության մասին, որոնց լուծումը պահանջում է համակարգային մոտեցում: Դեկան Ս.Քելյանը խոսեց նաև մանկավարժական պրակտիկայի ընթացքի և խնդիրների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՍԵՑԻՆ. Գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանի** հաղորդումը **2024/2025 ուստարվա ուսումնական պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ:** Հաղորդման ընթացքում դոց.Գ.Ալեքսանյանը ներկայացրեց պրակտիկայի անցկացման վայրը, երթուղիների ժամանակացույցը և ուղղությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

4. ԼՍԵՑԻՆ. Գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանի** հաղորդումը **«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների վերաբերյալ:** Հաղորդման ընթացքում դոց.Գ.Ալեքսանյանը հրապատակեց ամբիոնների, կրթության կազմակերպման, դեկանատի և ֆակուլտետի միջին գնահատականները/արդյունքները, ընդհանրական բնույթի խրդիրները, ինչպես նաև հրապարակեց ուսանողների կողմից գրված կարծիքներն ու առաջարկությունները: Խոսքի ավարտին Գ.Ալեքսանյանը նշեց, որ registrar համակարգը թույլ է տալիս դասախոսին տեսնելու իր գնահատականը և կարդալ ուսանողների կարծիքները:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. **Դեկան Ս.Ս.Քելյանը** խոսեց ուսանողների հետ հանդիպումների մասին, որոնց հիմնական նպատակն է հասկանալ սոց.հարցումներին ուսանողների մասնակցության և ուսումնառության ընթացքում առաջացած խնդիրների մասին բարձրաձայնելու պասիվության պատճառները: Դեկան Ս.Քելյանն իր խոսքում կոչ արեց ընտրել անհատական մոտեցում ցուցաբերելու մեթոդը: Հորդորեց սոցիոլոգիական հարցումը դիտարկել որպես հետադարձ կապի ձևավորման հարթակ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

5. *ԼՍԵՑԻՆ.* Գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանի** հաղորդումը **2024/2025 ուստարվա ընթացիկ և եզրափակիչ քննությունների ընթացքի վերաբերյալ:** Հաղորդման ընթացքում Գ.Ալեքսանյանը ներկայացրեց բաղադրիչների և եզրափակիչ քննությունների գնահատականների լրացման ժամանակահատվածը ինչպես նաև registrar համակարգում իրականացված փոփոխությունները՝ կապված ուսանողների ուսման վարձերի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

6. ԼՍԵՑԻՆ. **«Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության»** ամբիոնի վարիչ Մ.Ս.Մկրտչյանի, **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման»** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Մ.Մանուկյանի, **«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի»** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի **հաշվետվությունները (2023/2024) ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ:** (Հաշվետվությունները կցվում են):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան **Ս.Ս.Քելյանը** խոսեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոններում իրականացված աշխատանքների և ձեռքբերումների մասին: Ելույթի խոսքում դեկան Ս.Քելյանը հորդորեց հետևողական լինել և նվազագույնի հասցնել

ծրագրային հավելվածներում և էլեկտրոնային հարթակներում տեխնիկական բացթողումներն ու թերությունները: Ամփոփելով՝ դեկան Ս.Ս.Քելյանն առաջարկեց **ընդունել** **«Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության»** ամբիոնի վարիչ Մ.Ս.Մկրտչյանի, **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման»** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Մ.Մանուկյանի, **«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի»** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի **հաշվետվությունները**, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարած աշխատանքները գնահատել **դրական:**

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով **ընդունել** **«Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության»** ամբիոնի վարիչ Մ.Ս.Մկրտչյանի, **«Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման»** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Մ.Մանուկյանի, **«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի»** ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի **հաշվետվությունները**, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել **դրական:**

7. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

7.1. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոյանի** հաղորդումը GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Մարիամ Հակոբի Փենինյանի գիտական ղեկավարի փոփոխության հարցի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Մարիամ Հակոբի Փենինյանի գիտական ղեկավար նշանակել աշխարհագրական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) խորհրդատու **Հովիկ Յախշիբեկի Սայադյանին:**

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 27 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0, GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի առկա ուսուցման ասպիրանտ Մարիամ Հակոբի Փենինյանի գիտական ղեկավար նշանակել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) խորհրդատու **Հովիկ Յախշիբեկի Սայադյանին:**

7.2. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանի հաղորդումը **Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի համալրման վերաբերյալ:**

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.

1. Պոտոսյան Ակսել Հարությունի - աշխ. գիտ. թեկնածու (նախագահ)
2. Մկրտչյան Տիրուհի Գառնիկի - երկրաբ. գիտ.թեկնածու (քարտուղար)
3. Դավթյան Տիգրան Պետրոսի - տնտ. գիտ. թեկնածու
4. Մանուկյան Վահան Միհրի - երկրաբ. գիտ.թեկնածու
5. Սարգսյան Քրիստինե Արթուրիկի – աշխ. մագ. 1-ին կուրսի ուսանող

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 27 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0, հաստատել **մանդատային հանձնաժողով հետևյալ կազմով.**

1. Պոտոսյան Ակսել Հարությունի - աշխ. գիտ. թեկնածու (նախագահ)
2. Մկրտչյան Տիրուհի Գառնիկի - երկրաբ. գիտ.թեկնածու (քարտուղար)
3. Դավթյան Տիգրան Պետրոսի - տնտ. գիտ. թեկնածու
4. Մանուկյան Վահան Միհրի - երկրաբ. գիտ.թեկնածու
5. Սարգսյան Քրիստինե Արթուրիկի – աշխ. մագ. 1-ին կուրսի ուսանող

Գիտական խորհրդի նախագահ Ս.Ս.Քելյան

Գիտական խորհրդի քարտուղար Ե.Ս.Մանուկյան